ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2019 թ. փետրվարի 6

N 16

2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածին, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով և 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2019 թվականի հունվարի 23-ի թիվ 01/17.1/406-19 գրությամբ տրամադրված համաձայնությունը և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մի շարք համայնքներում հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության ընթացիկ ստուգման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետով նշված ընթացիկ ստուգումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության աշխատակիցներին:
3. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված անձանց՝ պարզել սույն որոշմամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված համայնքներում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով սահմանված պահանջների կատարման վիճակը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով և «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների կատարումը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2019 թվականի փետրվարի 6 -ի N 16 որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԺԱՄԿԵՏԸ
1.	Արագածոտն	Շամիրամ	1-ին եռամսյակ
2.		Վերին Բազմաբերդ	
3.		Վերին Սասնաշեն	
4.		Զարինջա	2-րդ եռամսյակ
5.		Կաքավաձոր	
6.		Դդմասար	
7.		Նոր Արթիկ	
8.		Դաշտադեմ	
9.		Դավթաշեն	
10.		Բազմաղբյուր	3-րդ եռամսյակ
11.		Ղազարավան	
12.		Ոսկեվազ	
13.		Աշնակ	
14.		Կանչ	
15.		Մելիքգյուղ	
16.		Ավան	4-րդ եռամսյակ
17.		Վերին Սասունիկ	
18.		Լեռնարոտ	
19.		Դպրևանք	
20.		Սաղմոսավան	
21.		Եղնիկ	

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ